

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐԿԻ

Երանաշիրոյ Տ. Պէնէտիքթօս Պատրիարքի սուղի քառասնօրեայ շրջանի աւարտումէն ետք, Յունաց Միաբանութիւնը ձեռնարկեց նոր Պատրիարքի ընտրութեան: 23 Յունուարին կայացաւ ընտրական ժողով, որը սակայն կանոնական պարզաբանումի կարօտ ինչ ինչ կէտերու պատճառաւ դրական ելքի մը չյանգեցաւ: Տարակարծութիւններու հարթումէն ետք, 16 Փետրուար, Երկուշաբթի ժամը 11ին, Յունաց Միաբանութիւնը իջաւ Ս. Յարութեան Տաճար (ըստ սովորութեան, Պատրիարքի ընտրութիւնը կը կատարուի Քաթոլիկոնի բաժնին մէջ, իսկ քուէարկութեան իրաւունքը վերապահուած



ՅՈՅՈ ԿԱՐՈ ՆԱԿԱՆԵԱՆ

է Ս. Սինոդի անդամներուն): Ս. Հոգւոյ շարականի երգեցողութենէն ետք կատարուեցաւ գաղտնի քուէարկութիւն եւ 15ի վրայ 9 քուէներու մեծամասնութեամբ նոր Պատրիարք ընտրուեցաւ Յորդանանի Առաջնորդ Տիոտորոս Արքեպիսկոպոսը: Միւս թեկնածուն՝ Դիւանապետ Վասիլիոս Սրբազան ստացաւ 5 քուէ, իսկ մէկ քուէն ճերմակ էր:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Երուսաղեմ, 3 Մարտ 1981

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Գաբրիելյու
Ս. Էջմիածին

Ձեռք Ս. Օծուքեան անուան բարեբաւ-
սիկ թանգարանի, կը ներկայացնենք Ձեզ
մեր եւ մեր Միաբանութեան ստեղծած ճեշ-
տութիւնները, մարտիով Ձեզ երկար եւ
երջանիկ ծախներ, իսկ Մայր Աթոռին՝ ան-
ասանութիւն եւ բարգաւաճութիւն:

ՆԵՐՍԷՆ ԳԱԿՈԲԻ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ Ք - ԲՍՄԱԿԱՆ Ք

● Կիր. 1 Քեառ. — Ս. Գառարազը մատուց-
ուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Աստուածածնայ խո-
րանին վրայ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Սեան
Վրդ. Զարեհեան:

● Եր. 7 Քեառ. — Ս. Հայրապետացն Արամայի
եւ Կիւրդի: Ս. Գառարազը մատուցուեցաւ ի Ս.
Գլխադիր: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Բարսեղ
Արզ. Գալէմտէրեան:

● Կիր. 8 Քեառ. — Ս. Գառարազը մատուց-
ուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասերն
մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Արփիար Արզ.
Տէմիրճեան:

● Եր. 14 Քեառ. — Ս. Գրիգորի Աստուածաբա-
նին: Ս. Գառարազը մատուցուեցաւ ի Ս. Գլ-
խադիր: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Մեսրոպ Արզ.
Մարտիկեան:

● Կիր. 15 Քեառ. — Բարեկենդան Առաջատորի

Անմիջապէս հնչեցին Տաճարին յունական մեծ ու փոքր զանգերը եւ ընտրեալին բրած
շնորհաւորական խօսքերէն ետք բոլորն ալ թափօրով բարձրացան Գառարաբարան:

Յաջորդ օրերուն, նորընտիր Գառարաբար ստացաւ պաշտօնի ճանաչման իր հրո-
վարտակները, նախ Իսրայէլի Ներքին Գործոց Նախարար ՏԵԹ. Գուրկէն եւ ապա, իշ-
նելով Ամման, Յորդանանի Վեհափառ Հիւսէյն Թագաւորէն:

Գահակալութեան հանդէսը եւս կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարի Յունաց
բաժնին մէջ: 1 Մարտ, Կիրակի առաւօտ, նորընտիր Գառարաբար «Հրաշափառ»ով
մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, որմէ ետք հանդիսաւոր Ս. Գառարազ մատուց
Քաթողիկոնի նորակառոյց, շքեղ խորանին վրայ: Գահակալութեան հանդէսը կատար-
ուեցաւ ժամը 11ին, ի ներկայութեան այլ յարանուանութեանց ներկայացուցիչներու,
արտասահմանէն ժամանած Օրթոտոքս Եկեղեցիներու պատուիրակութեանց, պետական
ղէմերու, ինչպէս նաեւ Իսրայէլէն, «Արեւմտեան Ափոն» եւ Յորդանանէն եկած յու-
նաղբաւան Սրբաբաժնի ժողովուրդի: Մեր կողմէ ներկայ լին Գերշ. Տ. Շահէ եւ
Տ. Կիրեղ Սրբազաններ եւ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Վրդ.: Տեղապահ ձեռ-
մանոս Արքեպիսկոպոս յանձնեց Գառարաբարական գաւազանը նորընտիր Գառարաբարին,
որ, հրովարտակներու ընթերցումէն ետք, արտասանեց շնորհակալութեան ուղիւ մը:
Ճառեր խօսեցան նաեւ Օրթոտոքս Եկեղեցիներու հին պատուիրակութիւնները: Յետոյ
Թափօրով եւ Սկաւտներու առաջնորդութեամբ բոլորն ալ բարձրացան Գառարաբար-
ան, ուր ընտրեալը բազմեցաւ Գառարաբարական գահուն, իրիւ Ծրդ Գառարաբարը Ե-
րուսաղէմի Սթոպին: Ներկաները մօտեցան Աջ առնելու նոր Հօտապետին:

Նորընտիր Տ. Տիոտորոս Ա. Քարիվալիս Գառարաբարը ծնած է 1923ին, Յունա-
կան արշիպեղագոսի Քիոս կղզին: 1938ին Երուսաղէմ գալով, կ'աշակերտի իրենց զրպ-
րեմկներին: Ատն մը ետք կը մկնի Յունաստան, հետեւելու համար աստուածաբանա-
կան ընթացքի: 1944ին վերստին Երուսաղէմ գալով կը ձեռնադրուի սարկաւազ, իսկ
1947ին՝ կուսակրօն քահանայ: Յաջորդ տարի կը կարգուի Աւագ Թարգման եւ Նախա-
գահ Կրօնական Դերագոյն Ատնանի: Դասեր ստանձնած է նաեւ իրենց Ընծայարանէն
ներս: 1962ին ընդունած է եպիսկոպոսական ձեռնադրութիւն, իսկ յաջորդ տարի նշա-
նակուած է Առաջնորդ Ամմանի եւ շրջակայից: Մօտ 20 տարիներ տնօր իր այս պաշ-
տօնավարութեան ընթացքին փայլած է եկեղեցական շխարհարութեամբ, արժանանա-
լով ստուարաթիւ իր հօսիւն անվերապահ սիրոյն եւ օտարներու պատկառանքին:

«Սինոն», ի դիմաց Ամն. Ս. Գառարաբար Հօր եւ Միաբանութեան, երկար տարի-
ներ եւ արդիւնաշատ պաշտօնավարութիւն կը մաղթէ Յոյն քրդ Եկեղեցւոյ նոր Գետին: